

Ընդհանուր դրույթներ

1. Moneytun համակարգով դրամական փոխանցումներն իրականացվում են Բանկի բոլոր մասնաճյուղերում:
2. Արագ դրամական միջոցների ուղարկման/ստացման և դեպի ՌԴ քարտերին փոխանցումների ուղարկման կատարման առավելագույն ժամկետը մինչև 10 րոպե է, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի կամ Moneytun համակարգի կողմից իրականացվում է լրացուցիչ ստուգում:
3. Դեպի ԱՄՆ, SEPA անդամ երկրներ և Հնդկաստան բանկային հաշիվների փոխանցումների ուղարկման կատարման ժամկետը կազմում է 1-2 աշխատանքային օր: Դեպի Չինաստան Union Pay քարտային հաշիվներին փոխանցումները հաշվեգրվում են 2-3 ժամերի ընթացքում, փոխանցումները իրականացվում են ՉԺՅ արտարժույթի պետական վարչություն (SAFE) աշխատանքային ժամերին, այն է երկուշաբթիից ուրբաթ երեւանի ժամանակով 4:00 – 13:00:
4. Տարբեր արժույթային զույգով փոխանցման դեպքում փոխարկման փոխարժեքը սահմանվում է MoneyTun համակարգի կողմից:
5. Յուրաքանչյուր փոխանցման համար Բանկը պարտավոր է հաճախորդին տրամադրել փոխանցման կատարումը հաստատող անդորրագիր: Չտրամադրված արագ դրամական փոխանցումների վաղեմության ժամկետը կազմում է 90 օր:
6. Արագ դրամական փոխանցման վավերապայմանների փոփոխությունը Բանկի կողմից կատարվում է վավերապայմանների փոփոխման դիմումի փոխանցողի անձնագրի տվյալների հիման վրա՝ առանց լրացուցիչ միջնորդավճարի գանձման: Վավերապայմանների փոփոխությունը կատարվում է միայն ստացող կողմի անձնական տվյալներում՝ այն է անուն, ազգանուն, առկայության դեպքում հայրանուն:
7. Վավերապայմանների փոփոխությունը, չեղյալացումը, հետվերադարձը կատարվում են Moneytun համակարգի կողմից սահմանված կարգով:
8. Վավերապայմանների փոփոխությունը, չեղյալացումը, հետվերադարձը ենթակա է կատարման միայն չվճարված փոխանցումների դեպքում:
9. Արագ դրամական փոխանցման չեղյալացումը կատարվում է չեղյալացման դիմումի և փոխանցողի անձնագրի տվյալների հիման վրա, առանց լրացուցիչ միջնորդավճարի գանձման, փոխանցման իրականացման նույն բանկային օրվա ընթացքում, փոխանցված գումարի և միջնորդավճարի վերադարձմամբ:
10. Փոխանցումների հետվերադարձ կատարվում է հետվերադարձի դիմումի և փոխանցողի անձնագրի տվյալների հիման վրա, առանց լրացուցիչ միջնորդավճարի գանձման:
11. Եթե փոխանցված միջոցներն արդեն վճարված են շահառուին, ապա Բանկը պատասխանատվություն չի կրում գումարների վերադարձման համար: Փոխանցված միջոցները շահառուի կողմից չստանալու դեպքում փոխանցված միջոցների հետ վերադարձման համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

12. Բանկն իրավունք ունի փոխանցման կատարումը մերժել, եթե վերջինս չի համապատասխանում իր կամ համագործակցող կազմակերպության ներքին իրավական ակտերին կամ միջազգային օրենսդրության պահանջներին, ինչպես նաև պատասխանատվություն չի կրում համագործակցող կազմակերպության կողմից գործարքը մերժելու, կասեցնելու կամ սառեցնելու, գումարի հետվերադարձի, սանկցիաների կիրառման պատճառով գումարը շահառուին տրամադրելու կամ տրամադրման ժամկետների համար:
13. Բանկը պատասխանատվություն չի կրում հաճախորդի կողմից տրված սխալ տվյալներով փոխանցման վնասների համար: